Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ԱԴԱՆԱՅԻ ՋԱՐԴԵՐՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Արտեմ Օհանջանյան

Ցանկանում եմ առանց մեկնաբանությունների վերարտադրել Ադանայի վիլայեթում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք արձանագրվել են Մերսինում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դարասի հավաստի հաղորդագրություններում, և որոնք նա ուղարկել է Թուրքիայում ավստրո-հունգարական պաշտոնական մարմիններին: Այդ գրառումները դիպուկ և մերկացնող կերպով նկարագրում են Ադանայի իրադարձությունները:

«15-ը ապրիլի 1909թ.

Հալեպի ավստրո-հունգարական հյուպատոսություն

Պարոն Հյուպատոս,

Ինձ թույլ եմ տալիս Ձեզ ուղարկել այն հեռագրերի պատճենները, որոնք ես երեկ և այսօր առավոտյան հանձնել եմ Կոստանդնուպոլսի դեսպանատանը, Ձեր հյուպատոսությանը, ինչպես նաև Ադանայի վալիին՝ երեկվանից այնտեղ հայերի ջարդերը շարունակելու կապակցությամբ: Այն բանից հետո, երբ անցյալ շաբաթ ինքնապաշտպանության նպատակով մի հայ երկու մահմեդական էր սպանել, Ադանան այժմ ալեկոծության մեջ է:[1]

Մի հայ երիտասարդ իր պատիվն ու կյանքը հինգ մահմեդականներից պաշտպանելու համար կրակել էր վերջինների վրա, որի հետևանքով երկուսը մահացել էին: Երեքշաբթի երեկոյան, ապրիլի 13-ին, ամբոխը գնացել էր գլխավոր նահանգապետի մոտ և պահանջել իրեն հանձնել հայ մարդասպանին՝ նրան հրապարակայնորեն մահապատժի ենթարկելու համար, և քանի որ արդյունքի չէին հասել, նետվել էին փողոց և սպանել առաջին իսկ պատահած հային...

Չորեքշաբթի, ապրիլի 14-ին, քաղաքով մեկ տարածվեց «Մահ քրիստոնյաներին» կոչը: Այնուհետև մուսուլմանների սպիտակ չալմայավոր և մահակներով զինված հրոսակախմբերը դիրքավորվեցին տարբեր մզկիթների առջև և սկսեցին սպանել անցնող քրիստոնյաներին: Նրանց հետևեցին կողոպտիչները և կարճ ժամանակ անց Ադանայի շուկան թալանված և ավերված էր ... Զոհվեցին շատերը, ամենից առաջ դաշտից վերադարձողները, որոնք անտեղյակ էին Ադանայում պատահածի մասին, նրանք քաղաք վերադառնալիս անողոքաբար սպանվեցին:[2]

Հայերն էլ իրենց հերթին խրամատավորվեցին իրենց թաղամասերում և սպանեցին այդտեղով անցնող մահմեդականներին: Զոհերի ստույգ քանակը չենք կարող նշել. մոտավորապես երկու հազար, որոնցից մոտ 30 մահմեդական որոնցից չորսը զինվոր, իսկ մնացածը՝ հայեր ու երկու կամ երեք հույն»:[3]

«15.04.09

Շտապ. Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Ադանայում շարունակվում են ջարդերը, կողոպուտն ու հրկիզումները, տեղեկություններ ենք ստանում Տարսուսի դժվար վիճակի մասին, բանակի ղեկավարությունը կասկածներ է հարուցում, փողոցները լի են վտանգով, իրադրությունը՝ խիստ բարդ է: Չարիքը

1 Österreich-Ungarn und Armenien 1872-1936, Sammlung diplomatischer Aktenstücke, in 12 Bänden, Wien, 1995, էջ 3368:

2 Նույն տեղում, էջ 3396:

3 Նույն տեղում, էջ 3369:

գնալով ավելի է մեծանում: Ձեյթունից գալիս է զինված հայերի մի մեծ խումբ»:[4]

«15.04.09

Շտապ. Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Մահմեդականների և հայերի միջև սաստիկ կռիվները շարունակվում են և տարածվում մյուս քաղաքներում: Ադանան մեծ մասամբ հրդեհված է, պետական օգնությունն անհնար է, խնդրում ենք շտապ կարգադրություններ անել: Ավերածությունները նոր թափ են ստանում և շարունակվում: Նոր հրաման է արձակվել միայն հայերին սպանելու, իսկ այլ քրիստոնյաներին՝ առաջին հերթին օտարերկրացիներին, հարգանքով վերաբերվելու մասին»:[5]

«16.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Անհուսալի իրադրություն է, ջարդեր, կողոպուտ, հրդեհներ Ադանայում, Տարսուսում: Խուճապային իրավիճակ Մերսինում»:[6]

«17.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Մերսինի մութասարիֆ լեյտենանտ Լուֆթի բեյի[7] շնորհիվ հանգիստը պահպանվում է: Տարսուսում հրդեհվել է հայկական եկեղեցական թաղամասը: Սարսափելի կողոպուտ, ջարդեր»:[8]

«19.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Վիլայեթում շարունակվում են ջարդերը, կողոպուտը, հրդեհները, գյուղատնտեսական մշակվող հողերը հրդեհվում և կողոպտվում են: Զոհերի թիվը 15000 է, նյութական կորուստը հնարավոր չէ հաշվել: Սեզարեն ավերվել է, օտարերկրյա ոչ մի նավ չի ժամանում»:[9]

«(27.)22.04.09

Փերա, հեռագիր Պալավիչինիին Վիեննա:

Դրությունը ամսի 16-ից ճգնաժամային է: Հալեպի Ջամբին Քրիխան գյուղն ամբողջովին այրված է և հայերն սպանդի ենթարկված: Անթաքիայում 328 հայի կոտորել են Վարգասլիկի, Ատիկի, Սասուի, Քեսաբի, Իսկանդարունի շրջակայքի գյուղերը մասամբ վառված են և հայերը սպանդի ենթարկված: Բազմաթիվ բռնաբարված կանայք և աղջիկներ երեխաների հետ թափառում են սարերում և սովամահ են լինում: Դորթյոլում քրդերի և չերքեզների ջոկատները 7000 հոգու պաշարել են՝ մինչև նրանք սովամահ լինեն: Իսկ իշխանության մարմինները միայն դիտում են: Այսօր առավոտյան անգլիական, ֆրանսիական և իտալական հրամանատարների ճնշման ներքո օսմանյան մի նավ ուղարկվեց Դորթյոլ՝ պաշարվածներին փրկելու համար: Արդյունքը արժանի չէ հիշատակման»:[10]

4 Նույն տեղում, էջ 3374:

5 Նույն տեղում, էջ 3398:

6 Նույն տեղում, էջ 3374:

7 Նույն տեղում, էջ 3405:

8 Նույն տեղում, էջ 3375:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, էջ 3392:

«25.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Հինգ օտարերկրյա ռազմական նավերի (անգլիական, ֆրանսիական, իտալական, գերմանական և ռուսական) ժամանումը կրկին վերականգնեց վստահությունը, հույս առաջացավ, որ մի քանի օրից Ադանայում նույնպես իրադրությունը կբարելավվի, երբ Սալոնիկից ժամանած Կոմիտեի բանակը, ինչպես հանձնարարված էր, ավարտին հասցրեց ավերման ու ոչնչացման գործը: Ռազմական նավերի սպաներն այդ վերջին իրադարձությունների լուռ վկաները դարձան: Նրանց ներկայությամբ զինվորները թալանում, հրդեհում և կոտորում էին:[11]

«Երկրի խորքերում գտնվող գյուղերում քրիստոնյա բնակչությունը ենթակա է սարսափելի ոճրագործությունների: Մահմեդականները ցանկանում են քրիստոնյաների արյունը: Ըստ ընդհանուր կարծիքի, ջարդերը դիտվում են որպես գրեթե բոլոր քրիստոնյաներին վերացնելու նախապատրաստություն: Կրոնական կամ քաղաքացիական ղեկավարությունը կամ անվանի մահմեդականները ահազանգ են հնչեցնում: Մարդկային կորուստը կազմում է 20 000 քրիստոնյա»:[12]

«26.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Անցյալ գիշեր սարսափելի լուրեր ստացվեցին Ադանայից: Վերջերս ժամանած զորքերը հրդեհում են հայկական թաղամասը, սպանում փախչողներին: Մեծ է տագնապը: Բանակը գնալով ավելի է բորբոքվում, բնակչությունը սարսափահար է, մեծ խուճապ է տիրում: Կառավարության տրամադրության տակ կա 4 000 զինվոր»:[13]

«27.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Ադանան հողի ու մոխրի է վերածվել, գրեթե բոլոր հայերին կոտորել են:[14]

Կառավարությունը փորձում է այդ վերջին աղետը վերագրել հայերին և պնդում է, թե նրանց թաղամասը մի ծեր կին է հրդեհել, և որ հայերը դա որպես հեղափոխական դեպք են ներկայացնում: Սակայն իրականությունը հակառակի մասին է աղաղակում. իմ բոլոր գործընկերները, ինչպես նաև ռազմանավերի հրամանատարները՝ այդ սարսափելի տեսարանների ականատեսները, միաձայն հայտարարել են, որ այդտեղ խոսքը ջարդերի մասին է, որոնք կազմակերպվել էին քրիստոնյաների դեմ և հետո սահմանափակվել միայն հայերով: Սա, Ձերդ Գերազանցություն, իմ անձնական համոզմունքն է, որ հիմնվում է իրադարձությունների վրա ու նաև այստեղի ուսյալ և երկրի ներսում գտնվող ունևոր մուսուլմանների հայտարարությունների վրա, որոնց հետ ես առևտրական կապերի մեջ եմ, և որոնք ինձնից չեն թաքցնում, որ հրամանը տվել են տեղական մարմինները՝ կոչ անելով զինվել և պատրաստ լինել...[15] Մարդկային կորուստը գնահատվում է 30 000, որից 2000 –ը ուղղափառ և կաթոլիկ հույներ են, 300-ը մուսուլման, իսկ մնացածը՝ հայեր:[16]

Նոր վալին խոստանում է կարգ ու կանոն հաստատել, բայց դա նրան դժվարությամբ կհաջողվի, Ադանայում շարունակվում են հրդեհները ու սպանությունները: Զինվորական

11 Նույն տեղում, էջ 3401:
12 Նույն տեղում, էջ 3375:
13 Նույն տեղում:
14 Նույն տեղում:
15 Նույն տեղում, էջ 3402:
16 Նույն տեղում, էջ 3403:

նոր պարետը ռազմական իրավունք է սահմանել, իսկ ռազմական դատարանը 5-րդ բանակային կորպուսի մյուդուրի նախագահությամբ շուտով տեղկայվելու է Ադանայում: Արդեն ձերբակալվել են մոտ 300 մեղավորներ, սակայն բոլորն էլ **հայեր են, և կարելի է մտավախություն ունենալ, որ այս ամբողջ դժբախտությունից ու ջարդերից հետո, նրանց կմեղադրեն նաև հեղափոխական լինելու մեջ, և որ նրանք ստիպված կլինեն նաև քավել մուսուլմանների կատարած մեղքերը:**[17] Այժմ, երբ ամեն ինչ թալանված ու կողոպտված է, ամեն օր ժամանում են զինվորական նորանոր միավորումներ, թվով 8 000 զինվոր: Այդքան զինվորներ ուղարկելը կարծես ոչ մի այլ նպատակ չունի, քան հաստատելու այն, որ այստեղ խոսքը հեղափոխության մասին է...[18]

Երբ հայ կաթոլիկ եպիսկոպոս Թերզյանը դատարանին ներկայացրեց իր ծխականների վերջին ջարդերի զոհերի ցուցակը, եւ դեռ ներկայացրեց հանցագործների անունները, նրա հետ վարվեցին որպես խաբեբայի և ստախոսի: Այդ պարագայում ոչ մի քրիստոնյա այլևս չի համարձակվի ներկայանալ:[19]

Մի քանի մահմեդական էլ է ձերբակալվել և բանտարկվել, սակայն դրանք ցածր դասի մարդիկ են, ավելի շուտ պասիվ մասնակիցներ, քան հրահրողներ: Նրանց ձերբակալումը, սակայն, նրանց համախոհներին վարանման առիթ տվեց և մի քանի խոջաներ սպառնացին ռազմական դատարանին, որ նորից կսկսեն ջարդերը, եթե նրանք դատապարտվեն... Միակ նպատակը, որ վալին դրել է իր առջև, որն առանց բացառության նաև քաղաքական և ռազմական վերնախավի նպատակն է, եվրոպացիների աչքում աղետալի իրադարձությունների չափերը մեղմելն ու ամբողջ մեղքը հայերին վերագրելն ու մահմեդականներին որպես զոհ ներկայացնելը...[20]

Ըստ մեր նոր տեղեկությունների, զոհերի թիվը զգալիորեն անցնում է 40 000-ի սահմանը: Մի խոսքով, սա հայերի իսկական բնաջնջում է ... Գրեթե բոլոր կանանց ստիպել են ընդունել մահմեդականություն իրենց կյանքը փրկելու և հարեմները զարդարելու համար...»:[21]

1909թ. հուլիսի 21-ին Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին Վիեննա է հաղորդում ռազմական ատյանի դատավարությունների մասին.

«Ռազմական դատարանը տխուր իրադարձությունների պատասխանատվության որոշ մասը բարդում է հայ բնակչության վրա, մեղադրելով նրան անջատողական միտումների և մուսուլմանական տարրին սադրելու մեջ ... Դատարանը, սակայն, միաժամանակ փաստում է մուսուլմանների կրքերի բավականին բացահայտ բորբոքման մասին, որոնք ինչ որ մի պահ հավատացել են, թե հայերի ջարդերը «կարգադրված են իշխանությունների կողմից, ինչպես 1896-ին»: Այնուհետև նա նշում է այն սոսկալի ցավերի մասին, որոնք ստիպում են դատարանին «սարսափից դողալ» և ի վերջո հաստատում է իշխանությունների մեղքը, որոնք չեն կարողացել արգելել ջարդերը և դրանց դեմն առնել: Ռազմական դատարանը ներկայացնում է նաև մահապատժի ենթարկվողների քանակը և, եզրափակելով հաշվետվությունը, նշում, որ արդարությունն ամբողջապես իրագործվելու պարագայում Ադանայի վիլայեթի ամբողջ բնակչությունը կհայտնվեր բանտում: Այդ պատճառով նա հանդես է գալիս համաներման օգտին ... Խորհրդարանի խոսնակը հարցմանն ի պատասխան ասել է, որ ողբերգական իրադարձությունները մոռացության շղարշով պատելու և Ադանայում մու-

17 Նույն տեղում, էջ 3404:
18 Նույն տեղում, էջ 3405:
19 Նույն տեղում, էջ 3426:
20 Նույն տեղում, էջ 3427:
21 Նույն տեղում, էջ 3428:

սուլմանների և հայերի միջև հաշտության հասնելու նպատակով Սահմանադրության տոնի առթիվ պետք է համաներում հայտարարվի»:[22]

Հետաքրքիր եմ համարում նաև Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Մուրիցի մեկնաբանությունը, որը վերաբերում է Ադանայի դեպքերին և այնտեղ տեղի ունեցած ջարդերին.

1909 թ. սեպտեմբերի 9-ին նա գրում է Պալավիչինիին.

«Հայերը մինչև հիմա աջակցում են երիտթուրքերին, որոնց նրանք պարտական են Աբդուլ Համիդի սարսափելի բռնակալությունից և նրա դահիճների չթուլացող հետապնդումներից և խոշտանգումներից ազատվելու համար, և այն ակնկալիքով, թե կվարձատրվեն իրենց ծառայությունների դիմաց: Ադանայի ջարդերը և քրդերի գնալով ավելի հաճախակի դարձող հարձակումներն ու սպանությունները սակայն, նրանց սովորեցնում են, որ ստիպված են նույնիսկ սահմանադրական ռեժիմում զգուշություն հանդես բերել: Իրապես չի կարելի սպասել, որ նրանք իրենց սրտերում սեր տածեն թուրքի հանդեպ»:[23]

Artem Ohanjanyan

The Massacres of Adana

Summary

The article examines the events that took place in Adana vilayet, and were recorded in Mersin in the authentic notifications of the Austria-Hungarian consul who sent them to the Austria-Hungarian official bodies in Turkey. The Austrian records in the article describe the events in Adana in a very accurate and disclosing way.

22 Նույն տեղում, էջ 3460-3464:

23 Նույն տեղում, էջ 36, 88: